դիտվել որպես հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հրավերով նախատեսված փաստաթղթերի չներկայացում և Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետով որակվել որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Դատարանը փաստում է, որ ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի 16.01.2023թ. թիվ 18-Ա հրամանը ոչ իրավաչափ է և պետք է անվավեր ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 16.01.2023թ.-ի թիվ 18 Ա հրամանը;

Դատարանն անդրադառնալով դատական ծախսերի հարցին՝ գտնում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ Դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայցվորը հայցադիմում ներկայացնելիս նախապես վճարել է օրենքով սահմանված չափով պետական տուրքի գումարը և հայցը բավարարվում է՝ Դատարանը գտնում է, որ ՀՀ Տավուշի մարզպետարանից հօգուտ <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի պետք է բռնագանձել՝ 50000 ՀՀ դրամ, որպես վճարված պետական տուրքի գումար:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը,

ՎՃՌԵՑ

<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ ՀՀ Տավուշի մարզպետարանի՝ ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 16.01.2023թ.-ի թիվ 18 Ա հրամանն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել:

Անվավեր ճանաչել ՀՀ Տավուշի մարզպետարանի գլխավոր քարտուղարի՝ «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու մասին 16.01.2023թ.-ի թիվ 18 Ա հրամանը;

ՀՀ Տավուշի մարզպետարանից հօգուտ <<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ-ի բռնագանձել՝ 50000 ՀՀ դրամ, որպես վճարված պետական տուրքի գումար:

Վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան այն ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

Ծանոթություն: Սույն վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, և վճիռը մտել է օրինական ուժի մեջ _____2023թ.:

ԴԱՏԱՎՈՐ Տ.ՍՏԵՓԱՆՅԱՆ